



Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ՀՈԳԵԳԱՂՈՒՄ

31 ՄԱՅԻՄ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1
Յիսուս կը Խաղաղեցնէ Փոթորիկը	էջ 2
Ծանուցում	էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ

«ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»

ԳԻՐՔԷՆ

(2.1-21)

Երբ Պենտէկոստէի օրը հասաւ, բոլոր հաւատացեալները միասնաբար մէկտեղուած էին: Յանկարծ սաստիկ հովի մը սուլոցին պէս ձայն մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ տունը ուր անոնք նստած էին: Յետոյ անոնք հրեղէն լեզուներ տեսան, որոնք տարածուեցան եւ հանգչեցան իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներ խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:

Այն օրը Երուսաղէմ քաղաքը լեցուն էր բարեպաշտ հրեաներով, որոնք աշխարհի չորս կողմերէն եկած էին: Երբ այս ձայնը լսուեցաւ, մեծ բազմութիւն մը եկաւ խոնուեցաւ այնտեղ եւ բոլորը անակնկալի եկան, որովհետեւ կը լսէին թէ ի՛նչպէս անոնք իրենցմէ իւրաքանչիւրին լեզուով կը խօսէին: Ամէնքն ալ սքանչացումով եւ զարմանքով կ'ըսէին իրարու. «Այս խօսողները բոլորն ալ գալիլիացիներ չե՞ն միթէ. ի՞նչպէս կ'ըլլայ որ մեր ծննդավայր երկիրներու լեզուներով կը խօսին, ինչպէս ահաւասիկ կը լսենք: Չէ՞ որ ահա մեր մէջ կան պարթեւներ, մարեր, ելամացիներ, միջագետացիներ, հրեաներ, կապադովկիացիներ, պոնտացիներ, ասիացիներ, փոիւզիացիներ եւ պամ-

փիլիացիներ, եգիպտացիներ, կիւրենիայի շրջանէն լիպիացիներ, Հռոմէն եկած հրեայ եւ հրէութեան դարձած այցելուներ, կրեոացիներ եւ արաբիացիներ: Եւ ահա բոլորս ալ մեր լեզուներով իրենցմէ կը լսենք Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին»: Ապշահար, անոնք զարմանքով կը հարցընէին իրարու. «Ի՞նչպէս կարելի է բացատրել ասիկա»: Իսկ ոմանք կատակելով կ'ըսէին. «Նոր գինիով գինովցած են»:

Այն ատեն Պետրոս տասնըմէկ առաքեալներուն հետ ոտքի ելաւ եւ բարձրաձայն սկսաւ անոնց խօսիլ.-

«Ո՛վ հրէաստանցիներ եւ դուք որ հիմա Երուսաղէմ կը գտնուիք. իրականութիւնը գիտնալու համար լսեցէ՛ք ինչ որ պիտի ըսեմ: Դուք կը կարծէք թէ ասոնք գինով են. բայց այդպէս չէ, որովհետեւ առտուան ժամը ինն է դեռ: Մինչդեռ ասիկա կատարումն է Յովէլի մարգարէութեան որ կ'ըսէ.

Իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ.

«Այնուհետեւ երբ վերջին օրերը գան, - կ'ըսէ Աստուած, - իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ. ձեր տղաքն ու աղջիկները իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի, ձեր երիտասարդները տեսիլներ պիտի ունենան եւ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն:

Երկինքի բարձունքից վրայ հրաշքներ պիտի ցուցնեմ, եւ նշաններ՝ վարը երկրի վրայ.

Այն օրերուն իմ Հոգիս պիտի թափեմ նաեւ իմ

ծառաներու եւ աղախիցներու վրայ, եւ անոնք եւս իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի:

Երկինքի բար-ձունքին վրայ հրաշքներ պիտի ցուցնեմ, եւ նշաններ՝ վարը երկրի վրայ. աշխարհ արիւնով, կրակով ու թանձր ծուխով պիտի լեցուի, արեւը պիտի խաւարի եւ լուսինը արիւնի գոյն պիտի առնէ, եւ ի վերջոյ պիտի հասնի Տիրոջ մեծ եւ անեղ օրը: Այն ատեն ով որ Տէրը օգնութեան կանչէ՝ պիտի փրկուի»:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ (14.25-31)

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-

«Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը ձեզի պիտի զրկէ իմ անունովս, ան ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի: Խաղաղութիւն կը թողում ձեզի. իմ խաղաղութիւնս է

իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութեան տարբեր է:

որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութեան տարբեր է: Մի՛ խռովիք եւ մի՛ վախնաք: Լսեցիք ինչ որ ըսի ձեզի, թէ “Ահա կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի”: Եթէ զիս կը սիրէք, ուրախ պիտի ըլլաք որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախ քան պատահիլը, որպէսզի երբ պատահի՝ այն ատեն հաւատաք: Այլեւս երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն ունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ թէ ես Հայրը կը սիրեմ եւ ա՛յդ է պատճառը որ ինձի բոլոր պատուիրածները կը կատարեմ: Ելէ՛ք, երթանք այստեղէն»:

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

ՀԵՌՈՒՍԱ՝ ՉԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԲՈՐԵԱՆ ԽԱՐԱԳԻՐ՝ ԳԵՆՄԿ Ք. Գ.

ՅԻՍՈՒ ՎԵ ԽԱՂԱՊԵՅԱԷ ՓՈԹՈՐԻԿԸ (23-27):

«Ապա Յիսուս նաւակ մտաւ, եւ իր աշակերտները հետեւեցան իրեն: Յանկարծ զօրաւոր փոթորիկ մը ելաւ լիւնի վրայ, այնքան՝ որ ալիքները գրեթէ նաւակը կը ծածկէին: Բայց Յիսուս կը քննարկէր: Աշակերտները մօտեցան, արթնցուցին զինք ու ըսին.

- Տէ՛ր, ազատէ՛ մեզ, անա կը կորսուիմք:

Յիսուս ըսաւ անոնց.

- Ինչո՞ւ այդքան կը վախնաք, թերահաւատներ:

Յետոյ ոտքի ելաւ, սաստեց հովերը եւ լիւնը, եւ կատարեալ հանդարտութիւն տիրեց: Ամէնքն ալ հիացած կ'ըսէին.

- Ի՞նչ տեսակ մարդ է ասիկա, որովհետեւ նոյնիսկ հովերն ու ծովը իրեն կը հնազանդին»:

Այս դրուագէն առաջ, տեսանք որ կային բժշկութեան երեք դրուագներ: Յիսուս նախ բորոտ մը բժշկեց, յետոյ՝ հարիւրապետին ծառան եւ վերջն ալ Պետրոսի զոքանչին ջերմը անցուց: Ապա տեսանք դրուագ մը, որուն մէջ երկու անձեր խնդրանքով կը մօտենային Յիսուսի. խնդրանքները առնչութիւն ունէին Յիսուսի հետեւելու հետ: Եւ Յիսուս կը պատասխանէր:

Այդ դրուագները մեզի ցոյց կու տային, թէ ինչպէ՞ս Յիսուս մարդկային աշխարհի ցաւերուն եւ մտահոգութիւններուն վրայ իշխանութիւն ունէր: Իսկ փոթորիկի խաղաղեցման, ինչպէս նաեւ երկու դիւահարներու բժշկութեան դրուագներով՝ ակտարանիչը ցոյց կու տայ, թէ Յիսուս իշխանութիւն ունէր նաեւ բնութեան եւ ոգեղէն աշխարհին վրայ:

Անցնինք սերտելու փոթորիկի խաղաղեցման դրուագը:

Անոնք որ Հին Կտակարանի ծանօթ են, այս դրուագին մէջ կրնան պզտիկ նմանութիւններ տեսնել Յովնան մարգարէին պատմութեան հետ: Այնտեղ կը կարդանք, որ ծովուն մէջ հով մը բարձրացած էր, եւ նաւը խորտակուելու վտանգին մէջն էր: Մարգարէն նաւուն խորշը իջնելով պառկեց էր ու խորունկ կը քնանար, իսկ նաւաստիները ահ ու սարսափի մատնուած էին: Նոյնպէս

ալ Յիսուս՝ փոթորկոտ ծովէն տատանող նաւակին ետեւի կողմը կը քնանար, եւ իր աշակերտները ահ ու սարսափի մէջ էին: Մէկ պարագային նաւապետը կ'արթնցնէ, միւս պարագային՝ աշակերտները: Սակայն մարգարէն արթնցնելով՝ ուրիշ բան կ'ըսուի անոր, իսկ Յիսուսը արթնցնելով՝ ուրիշ բան: Մարգարէն կը խնդրուի, որ ան ալ իր կարգին իր Աստուծոյն աղօթէ, որպէսզի Աստուած փոթորիկի վտանգէն զիրենք գերծ պահէ: Իսկ Յիսուսի պարագային աշակերտները կը դիմեն՝ ըսելով. «Տէ՛ր, ազատէ՛ մեզ, ահա կը կորսուինք»:

Աշակերտներուն խնդրանքը որոշապէս կ'արտայայտէ մարդկային թերահաւատութիւնը, այսինքն՝ հաւատքի տկարութիւնը: Անշուշտ ասիկա միայն Յիսուսի աշակերտներուն յատուկ չէր, այլ նաեւ՝ բոլորիս:

Մենք ալ յաճախակի կերպով նոյն տագնապններուն կը մատնուինք, եւ այն տպաւորութիւնը կ'ունենանք, թէ Աստուած իր ականջները փակեր է եւ երբեք մեր աղաչանքները կամ օգնութեան մեր կանչերը չի լսեր:

Սակայն Յիսուս կը պատասխանէ. «Ինչո՞ւ այդքան կը վախնաք, թերահաւատներ՛»:

Յիսուսի պատասխանը յանդիմանութիւն մըն է, որ կը պահանջէ աշակերտներէն կամ իրեն հետ եղողներէն՝ Աստուծոյ վրայ վստահութիւն ունենալ, սնուցանել ու մշակել:

Յետոյ ան կը դառնայ հովերուն եւ ծովուն ու կը սաստէ զանոնք: Ասոր մէջ կը տեսնենք Յիսուսի իշխանութիւնը բնութեան վրայ:

Յետ հրաշագործութեան՝ իրեններուն վստահութիւնը կը վերադառնայ: Սակայն անոնց բացականչութիւնը կը յայտնէ, թէ տակաւին անոնք Յիսուսը որպէս մարդ կը տեսնէին: Անշուշտ՝ Աստուծոյ բազուկով գործող մարդը: Աշակերտները շատ լաւ գիտէին, թէ Յիսուս մարգարէ էր: Ո՛չ թէ միայն մարգարէ մը, այլ՝ մարգարէն, որուն կը սպասէին Մովսէս մարգարէին տուած խոստումէն ի վեր: Գիտենք, որ աշակերտները Յիսուսի հարազատ ինքնութիւնը պիտի ճանչնային անոր յարութենէն ետքը:

Այս դրուագը այնքան խոր տպաւորած է աշակերտները, որ չորս աւետարաններուն մէջ ալ կը գտնենք: Թէեւ չորրորդ

աւետարանին մէջ թեթեւօրէն տարբեր ձեւով:

Երբ որեւէ դրուագ բոլորին մէջ արձանագրուած է, յաւելեալ կերպով մեր ուշադրութիւնը կը գրաւէ, եւ կը մտածենք. քանի բոլորն ալ ուզեր են ասիկա արձանագրել իրենց հասցէներուն համար, արդեօք ի՞նչ պատգամ կը փոխանցէ:

Բոլոր աւետարանիչներն ալ առաջին եկեղեցիին կամ վաղագոյն շրջանի քրիստոնէութեան պատգամ մը կու տային այս դրուագով: Հասկնալու համար պատգամը, սա հարցումը պէտք է դնել:

Այն ատեն եկեղեցին ի՞նչ վիճակի մէջ էր:

Առաջին քանի մը դարերու եկեղեցին հալածանքներու ենթակայ էր: Աշակերտները այդ հալածանքներու սկզբնաւորութեան կը քարոզէին Քրիստոսի աւետարանը: Եւ այս դրուագը իրենց վիճակը ամենէն հարազատ կերպով ցոյց կու տար: Նաեւ զիրենք մտիկ ընող նորադարձներուն համար՝ լաւապէս կրնար ծառայել քաջալերելու, որ անոնք հակառակ բոլոր հալածանքներուն՝ Քրիստոսի ապաւինին, որովհետեւ անիկա է վստահութեան աղբիւրը:

Առաքեալներուն փորձառութիւնները ամենէն իրաւ դասը կրնային ըլլալ: Եւ անոնք յաճախ օգտագործեցին Յիսուսի հետ իրենց ունեցած փորձառութիւններուն օրինակները:

Երեւակայեցէք Մատթէոս առաքեալը, որ մարդոց դիմաց կանգնէր եւ քարոզելու ատեն տեսնելով հալածանքներէն սարսափահար ժողովուրդը՝ սկսէր պատմել փոթորիկի խաղաղեցման դրուագը: Ասիկա վստահութիւն ներշնչելու լաւ կերպ մըն էր: Այս դրուագով առաքեալները կը հրաւիւրէին հաւատացեալները, որ անոնք Քրիստոսի ապաւինին՝ հակառակ կեանքի բոլոր փոթորիկներուն:

Այսօր թէեւ մենք հին ժամանակներու հալածանքներուն մէջ չենք, սակայն տարբեր տեսակի հալածանքներու մէջ ենք: Հին ժամանակներու հալածանքները ֆիզիքական կեանքին կը սպառնային: Մինչդեռ այսօրուան հալածանքները կը սպառնան հոգեբանական եւ հոգեկան աշխարհին:

ԵՐԵՍՆՕՐԵԱԿ

Հրագրաբար, 04 Յոուա 2009

11.00 Աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Կրոնար, 07 Յոուա 2009

09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ

Երեբար, 09 Յոուա 2009

19.00 Երիտասարդական՝
ներկայացում եւ զրոյց.
“Երդմնեցուցութիւն (Exorcism)”

Հրագրաբար, 11 Յոուա 2009

11.00 Աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Հարա, 13 Յոուա 2009

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԱԽՈՐԶԻ ԵՒ Ի ՎԻՐԱՊԷՆ

10.00 Զոյքերու միօրեայ սեմինար՝
Ընտանեկան Միաւորը Սուրբ է.
«Զոյքի Առաւել Մտերմութիւն»

Կրոնար, 14 Յոուա 2009

ՏՕՆ ՍՈՒՐԲ ԷՋՐԵԱՏԱՐ

09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ

Հրագրաբար, 18 Յոուա 2009

11.00 Աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Կրոնար, 21 Յոուա 2009

09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ

Երեբար, 23 Յոուա 2009

19.00 Ֆիլմի ցուցադրութիւն
“The Sea Inside”

Հրագրաբար, 25 Յոուա 2009

11.00 Աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Հարա, 27 Յոուա 2009

ԳԻՏ ՆԵՆԱՐԱՅ

Կրոնար, 28 Յոուա 2009

09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ

Հրագրաբար, 02 Յոուա 2009

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ

11.00 Աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Կրոնար, 05 Յոուա 2009

09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ



Ս. ՅԱԿՈԲ

Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցւոյ

«ՆՈՐ ԾԱՂԻԿ»

փոքրիկներու երգչախումբը
Ս. Պատարագը պիտի երգէ
Կիրակի 7 Յունիս 2009-ի
ժամը 10.00ԷՆ սկսեալ:

Հայմայնքս սիրով հրաւիրուած է
զիրենք քաջալերելու:

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՁԵՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐՈՆ ԱՆԽՕՐՕՔ
ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿԱՊՈՒԷԼՈՎ
ԵԿԵՂԵՅՈՅ ԴԻԲԱՆԱՏՈՒՆ
514 331 5445 x202

ՍՈՅՆ ԹԵՐԹԻԿՆ Ե-ԱՆԱԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ ՈՒՊՊԱՐԿԵՅԷ
eglise58@sourphagop.com-ը

ՀԻԲԱՆՈՒՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ
Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ. Տ.
Գառնիկ Քինյ. Գոյունեանի.
514 331 5445 x203 կամ 514 909 5203

ՆԱԽՈՐԴ ԹԻԲԵՐՈՆ ԿՐՆԱՔ ԳՏԱԵԼ
www.sourphagop.org/lradou
ԿԱՂԲԷԶԻՆ ՎՐԱՂ